տէրտարը. Մարտ 22ին կը հասնին Ադրիանուպոլիս՝ իրենց ճամբուն վրայ հանդիպելով Մեծ և Փոքր Զէքմէճէները, Սիլիվրի, Զօռլու, Պուրկազ, Պապա և Հավսա։ Քսանըհինգ օր կը մնան Ադրիանուպոլիս, ուր ապարդիւն կ'անցնին Մարտիրոս վրդ.ի դիմումները, և Ապրիլ 16ին դուրս կ'ելլեն քաղաքէն ու հանդիպելով Հավսա և Պապա՝ նոյն ամսոյ 18ին կը հասնին Թէքիրտաղ։ Հոն կ'անցընեն Զատիկը, որ նոյն տարուան Ապրիլ 22ին կը հանդիպի, ու Զատիկի չորրորդ օրը (25 Ապրիլ) ծովային ճամբով կը հասնին Կ. Պոլիս ու ականատես կ'ըլլան հրդեհին պատճառած աղէտին Ղալաթիոյ մէջ, որուն 75 թաղամասերէն 70ը հրոյ ճարակ եղած էին ու ազատուած էին միայն 5 թաղամասեր, որոնց մէջ էր մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցին։

Դարձեալ նոյն տարուան Օգոստոս 1ին Երեմիա կ'ընկերանայ Մարտիրոս Ղրիմեցիի, որ կ'երթար Թէքիրտաղ՝ Եղիազար վրդ.ի հետ Երուսաղէմ մեկնող Աստուածատուր պատրիարքը ողջունելու և անոր օրհնութիւնը ընդունելու։ Ծովային տաժանելի ուղևորութենէ մը վերջ հազիւ երրորդ օրը կը հասնին Թէքիրտաղ, բայց պատրիարքը հոն չգտնելով՝ Ս. Աստուածածնի պահոց Գշ. օրը (7 Օգոստ.) կը մեկնին անկէ, դարձեալ աննպաստ քամիով, և Շբ. օրը (11 Օգոստ.) կը դառնան Կ. Պոլիս, հանդիպելով Արակլիա, Պղատոս ու Սիլիվրի։

Երեմիա ազգային իշխանութեան մօտ նոտարի և խորհրդականի իր պաշտօնը կը շարունակէ յաջորդ տարիներուն ալ։ Իբր այդ 1664 Սեպտ. 14ին կը ղրկուի Բերիա Եղիազարի մօտ՝ խափանելու համար անոր կաթողիկոսանալու ծրագիրը։ Իր Կ. Պոլսէն դուրս ելլելէն եօթն օր վերջ, օրուան պատրիարքը՝ Սարգիս Թէքիրտաղցի՝ կը գրէ Եղիազարի. «Դարձեալ առաւելա-